

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը հեռակա ուսուցման մագիստրոսի կրթական մակարդակում կազմակերպում է ուսուցում հետևյալ ծրագրերով.

«Տնտեսագիտություն» մասնագիտություն

1. «Տնտեսական քաղաքականություն և իրավունք»
2. «Միջազգային տնտեսական հարաբերություններ»
3. «Կառավարման տեղեկատվական համակարգեր»

«Ֆինանսներ» մասնագիտություն

4. «Ֆինանսներ»
5. «Բանկային գործունեության կազմակերպում» «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտություն
6. «Հաշվապահական հաշվառում և աուդիտ»

«Կառավարում» մասնագիտություն

7. «Գործարար վարչարարություն (կառավարում)»
8. «Ինովացիոն կառավարում»
9. «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում

«Կառավարում» մասնագիտություն

«Գործարար վարչարարություն (կառավարում)»

մագիստրոսական ծրագիր
Ծրագրի մասնագիրը

Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա բակալավրի կամ դրան համարժեք որակավորում.

- տվյալ մասնագիտությամբ բակալավրի կամ համարժեք որակավորում ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ նախորդ ուսումնառության ընթացքում ցուցաբերած առաջադիմության արդյունքների հիման վրա,
- այլ մասնագիտությամբ բակալավրի կամ համարժեք որակավորում ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ տվյալ մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման քննական ծրագրին համապատասխան անցկացված քննությունների արդյունքների հիման վրա: Ընդունելությունը կատարվում է համալսարանի հեռակա ուսուցման մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի համաձայն:

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է.

- կազմակերպությունների գործարար գործընթացների վերլուծությունը, վերակազմակերպումը և համակարգումը,
- կազմակերպությունների ռիսկերի արդյունավետ կառավարման համակարգի, ռիսկերի պատասխանատվության բաշխման և ներքին հսկողության մեխանիզմների մշակումը,
- ոչ լրիվ տեղեկատվության առկայության պայմաններում որոշումների ընդունումը և կանխատեսումների կայացումը,
- ISO 9001:2015 պահանջներին համապատասխան կազմակերպություններում որակի կառավարման համակարգի մշակումը և ներդրումը,
- կազմակերպության ռազմավարության մշակումը և իրականացումը:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. ներկայացնել ISO 9001:2015 միջազգային ստանդարտներին համապատասխան որակի և ռիսկերի կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման սկզբունքներն ու պահանջները,
2. քննարկել կազմակերպության նյութական, տեղեկատվական և այլ հարակից հոսքերի, ռազմավարական և ֆինանսական կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաները,
3. ճանաչել դասակարգել կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպությունների համար,
4. դասակարգել կազմակերպություններում ինովացիայի և մարքեթինգի կառավարման, գործարար գործընթացների ռեինժինիրինգի ժամանակակից տեխնոլոգիաները,
5. նկարագրել մարքեթինգային հետազոտությունների, անձնակազմի խթանման և գնահատման մեթոդները, առաջնորդության և կորպորատիվ կառավարման մեթոդաբանությունը,
6. ճանաչել աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորման մոտեցումները, կառավարչական հաշվառման և բյուջետավորման համակարգերի կառավարման մեթոդները,
7. սահմանել կառավարչական հիմնախնդիրների լուծմանն առնչվող հոգեբանական դրույթները և կազմակերպական վարքի էթիկայի նորմերը:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. կառուցել կազմակերպության որակի կառավարման համակարգի և գործարար գործընթացների իրականացման մոդելներ,

2. նախագծել կազմակերպության արդյունավետ կառավարման համար բյուջեների ձևավորման և կառավարչական հաշվառման համար տվյալների բազա, մասնակցել լոգիստիկական ցանցի ձևավորման աշխատանքներին,

3. ընտրել տարատեսակ մարքեթինգային ռազմավարություններ, ֆինանսական գործիքներ և ընդունել արդյունավետ կառավարչական որոշումներ,

4. առաջարկել կազմակերպության ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝ ֆինանսական կայունության ամրապնդման համար,

5. առաջարկել նոր կիրառություններ տվյալ բիզնես ոլորտում օգտագործվող պլանավորման, կազմակերպման և վերահսկման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական համակարգերի ներդրման համար,

6. կազմակերպել աշխատանքը բարձր արդյունավետություն ապահովելու համար՝ և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),

2. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները,

3. արդյունավետորեն պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները,

4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:

Գնահատման ձևերը

✦ ընթացիկ քննություններ,

✦ անհատական աշխատանքների կատարում,

✦ եզրափակիչ քննություններ.

✦ մագիստրոսական թեզի պաշտպանություն

Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները «Գործարար վարչարարություն (կառավարում)» (այսուհետ՝ ԳՎ) ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել կազմակերպությունների՝ ցածր, միջին և բարձր օղակի պաշտոններում:

Ներկայումս ԳՎ գծով մասնագետների ապագա կարիերայի հնարավորությունները պայմանավորված են հետևյալ միտումներով.

- տարրատեսակ ռիսկերի կտրուկ աճ, որոնց կազմակերպությունները բախվում են և ստիպված են հաշվի առնել,

- արտաքին միջավայրի շարունակական փոփոխություն, որն էլ ստիպում է կազմակերպություններին ավելի մեծ ուշադրություն դարձնել ԳՎ-ին: ԳՎ արդիական է և մեծ կարևորություն ունի տնտեսության ցանկացած ոլորտում՝ սկսած գյուղատնտեսությունից և արդյունաբերությունից մինչև առևտուր և ֆինանսներ:

Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- ժամանակակից սարքավորումներով և ծրագրային միջոցներով ապահովված համակարգչային լսարաններ,

- էլեկտրոնային ռեսուրսներ:

Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

- Բարձրագույն մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչ

- ՀՀ կրթական որակավորումների ազգային շրջանակ

Ծրագրի դասընթացների նկարագրիչները

1. Օտար լեզու-1 6 ECTS կրեդիտ

2 ժամ/շաբ. 2 ժամ գործն. Առաջին կիսամյակ Ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

- կատարելագործել ուսանողների օտար լեզվով հաղորդակցական կարողությունները՝ ինչպես մասնագիտության, այնպես էլ հաղորդակցման այլ ոլորտներում,
- խորացնել մասնագիտական լեզվի բառապաշարի, քերականական և ոճաբանական յուրահատկությունների վերաբերյալ գիտելիքները,
- ձևավորել գիտական բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ,
- զարգացնել մասնագիտական հարցերի շուրջ քննարկելու և բանավիճելու կարողությունը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. կիրառելով մասնագիտական տեքստերի վերլուծության տարբեր մոտեցումները (որոնողական, ճանաչողական, մեկնաբանական)՝ ճիշտ ընկալել դրանց բովանդակությունն ու կառուցվածքը,
2. տարրորոշել մասնագիտական բառապաշարի բոլոր շերտերը՝ դրանց ճշգրիտ գործածության նպատակադրմամբ,
3. ցուցաբերել մասնագիտության ոլորտում օտար լեզվով ինքնուրույն աշխատանք կատարելու սկզբունքների իմացություն:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. իրականացնել մասնագիտական տեքստերի իմաստային, կառուցվածքային և ոճական վերլուծություն և թարգմանություն,
2. ներկայացնել և մեկնաբանել մասնագիտական տեսակետներ ու փաստարկներ, ձևակերպել, շարադրել, հիմնավորել անձնական կարծիքը, քննարկել, բանավիճել մասնագիտական հարցերի արդի հիմնախնդիրների շուրջ,
3. գրել և ներկայացնել մասնագիտական թեմաներով էսսեներ/ զեկույցներ, ռեֆերատներ, գիտաժողովի թեզիսներ՝ տրամաբանորեն և հստակ կառուցելով շարադրանքը,
4. լսելով ընկալել և վերարտադրել մասնագիտությանն առնչվող դասախոսությունների, հարցազրույցների ձայնագրություններ և տեսագրություններ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. արդյունավետ օգտվել տեղեկատվական տարբեր աղբյուրներից (ներառյալ ինտերնետային) տեղեկատվություն քաղելու, քննադատաբար վերլուծելու և ներկայացնելու նպատակով:

Դասընթացի հաջող ավարտին ուսանողի գիտելիքները և կարողությունները պետք է համապատասխանեն Լեզուների իմացության/ իրազեկության համաեվրոպական համակարգի (CEFR-ի) B2 մակարդակին:

Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. գործնական պարապմունք դասախոսի ղեկավարությամբ,
2. անհատական և խմբային աշխատանք,
3. անհատական և թիմային գիտահետազոտական աշխատանք,
4. ինքնուրույն աշխատանք,
5. բանավոր ներկայացում/պրեզենտացիա (անհատական ինքնուրույն նախագծի իրականացում),
6. գրավոր և բանավոր ստուգում/ հարցում,
7. իրավիճակային խնդիրների քննարկում:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Դասընթացն ավարտվում է հարցատոմսերով կազմակերպվող ստուգարքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ յուրաքանչյուրը՝ 5 միավոր.

1. մասնագիտական տեքստի ընթերցում, թարգմանություն և վերարտադրում,
2. մասնագիտական բառապաշարի ստուգում,
3. զրույց մասնագիտական թեմաների շուրջ,

4. բանավոր ներկայացում (պրեզենտացիա) մասնագիտական խնդրի վերաբերյալ: Միավորների քայլը 0.5 է: Ստուգումից 20-միավորանոց համակարգում 8 և ավելի միավոր ստացած ուսանողները կհամարվեն ստուգարքը հանձնած:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

1. Տվյալ ոլորտի մասնագիտական լեզվի բառապաշարային, քերականական և ոճաբանական յուրահատկությունները:
2. Մասնագիտական տեքստերի գործառնական նշանակությունը և դրանց իրացումը օտար լեզվով գրավոր ու բանավոր հաղորդակցման գործընթացում:
3. Ակադեմիական գրագրություն՝ գիտական հոդվածների ու աշխատությունների, գրախոսությունների և ամփոփումների, ինչպես նաև ռեֆերատների, զեկուցումների, էսսեների շարադրման ձևերն ու սկզբունքները:
4. Մասնագիտական բնագիր տեքստերի, դասախոսությունների, ձայնագրությունների ունկնդրմամբ՝ դրանց բովանդակության վերծանման, վերարտադրության առանձնահատկությունները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Trappe T., Tullis G. Intelligent Business (Advanced). London: Pearson Longman, 2011.
2. Roberts M. English for Economics in higher education studies (ed. Terry Phillips) Reading UK: Garnet Publishing Ltd., 2012.
3. Corballis T., Jennings W. English for Management Studies in higher education studies. Reading UK: Garnet Publishing Ltd., 2009.
4. Maier-Fairclough J. & Butzphal G. Career Express Business English (C1). Reading UK: Garnet Publishing Ltd., 2012.
5. MacKenzie I. Professional English in Use / Finance. Cambridge: Cambridge University Press, 2010.
6. Master P. English Grammar and Technical Writing. US, 2004.
7. Linville L. Academic Skills Achievement Program. Boston: IRWIN Mirror Press, 1994.

2. Օտար լեզու-2 3 ECTS կրեդիտ

1 ժամ/շաբ. 1 ժամ գործն. Երկրորդ կիսամյակ Ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

- ամբողջացնել նախորդ մոդուլի օգնությամբ ձեռք բերած գիտելիքները,
- ծանոթացնել օտար լեզվի իմացության ստուգման և գնահատման պահանջներին,
- ներկայացնել լեզվի իմացության համաեվրոպական չափանիշները և ծանոթացնել թեստավորման հիմնական սկզբունքներին,
- ներկայացնել լեզվի թեստավորման հիմնական ռազմավարությունը և մարտավարությունը:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

1. օտար լեզվի իմացության միջազգային թեստավորման յուրահատկությունները,
2. լեզվի իմացության համաեվրոպական չափանիշները (CEFR) և թեստավորման հիմնական սկզբունքները,
3. լեզվի թեստավորման հիմնական ռազմավարությունը և մարտավարությունը,
4. միջազգային թեստերի առանձնահատկությունները:

Հիմնական գրականության ցանկ.

1. Philips D. Longman Preparation Course for the TOEFL IBT, Longman, 2007.
2. Rogers B. The Complete Guide for TOEFL IBT Test Preparation, Thomson, 2007.
3. Boston Educational Services – Official ITEP Preparation Guide, Create Space Independent Publishing Platform, 2014.
4. ETS – The Official Guide to the TOEFL Testing, McGraw-Hill Education, 2012.
5. Cullen P. The Official Cambridge Guide to IELTS, Cambridge English, 2014.
6. Kaplan – IELTS Premier, Kaplan Publishing, 2016.
7. Hashemi L., Thomas B. Cambridge English IELTS Trainer. Cambridge: Cambridge University Press, 2011.

3. Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում 3 ECTS կրեդիտ

1 ժամ/շաբ. 5. 1 ժամ գործն. 6. Առաջին կիսամյակ 7. Ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

- ուսանողներին տալ գիտելիքներ տեղեկատվական տեխնոլոգիաների մաթեմատիկական և ծրագրային ապահովման գործիքակազմի (Big Data, Eviews, MatLab և այլն), ինչպես նաև դրանց կիրառման վերաբերյալ,

- ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են տեղեկատվական տեխնոլոգիաների և մեթոդների հիման վրա տարբեր խնդիրներ ձևակերպելիս և լուծելիս տվյալների տնտեսական վերլուծության համակարգերում օգտագործվող ալգորիթմները հասկանալու և կիրառելու համար:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրել տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից մեթոդներն ու մոդելները,
2. ներկայացնել բիզնես-գործընթացներում օգտագործվող տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ մեթոդները և մոդելները և դրանց իրականացման եղանակները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գործնականորեն օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաների մաթեմատիկական և ծրագրային գործիքակազմը,
2. արդյունավետ մաթեմատիկական և ծրագրային գործիք ընտրելու նպատակով կատարել համեմատական վերլուծություն,
3. իրականացնել տեղեկատվական և ավտոմատացված համակարգերի տեսակների դասակարգում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտագործել գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) հայթայթած տեղեկատվությունը,
2. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր,
3. կատարել գիտական հետազոտություններ՝ օգտագործելով տվյալների ինտելեկտուալ վերլուծության վերաբերյալ գիտելիքները:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)

Գ2. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները,

Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ,
2. նախադեպերի վերլուծություն,
3. խմբային աշխատանք,
4. անհատական աշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքը անցկացվում է հարցատոմսերով, ստուգվում են ուսանողի՝ տարբեր համակարգչային փաթեթների իմացությունը և դրանցով տարատեսակ խնդիրներ լուծելու հմտությունները:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի տեսական հիմունքները տնտեսագիտության, ֆինանսների և կառավարման ոլորտներում:

Թեմա 2՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների մաթեմատիկական և ծրագրային ապահովման և գործիքակազմը:

Թեմա 3՝ Կիրառական ծրագրային փաթեթներ / Big Data, Eviews, MatLab /:

Թեմա 4՝ Data Mining, Eviews, MatLab փաթեթների կիրառությունները տնտեսագիտության, ֆինանսների և կառավարման ոլորտներում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Паклин Н. Б., Орешков В. И. Бизнес-аналитика: от данных к знаниям. СПб.: Питер, 2013. 704 с. 2. Компьютерные сети: Учебный курс/Пер.с англ. Богомолов О.А.-М. Изд.отдел <> ТООО:1997.-696.с. 3. Степанов Р.Г. Технология Data Mining: Интеллектуальный анализ данных, Казань, 2008, 58 с. 4. Компьютерные сети: Учебный курс/Пер.с англ. Богомолов О.А. <> ТООО:1998.-659.с. 5. Евдокимов В.В. Экономическая информатика. Учебник для вузов. СПб, Иностранная литература, 1997, 582 с.

4. Հետազոտության պլանավորում և մեթոդներ 3 ECTS կրեդիտ

1 ժամ/շաբ. 0,5 ժամ դաս., 0,5 ժամ գործն. Առաջին կիսամյակ Ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

- ուսանողներին տալ գիտելիքներ մասնագիտական հետազոտությունների պլանավորման, մեթոդների և վերլուծության ոլորտում, ինչպես նաև դրանց կիրառման վերաբերյալ,
- ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական հետազոտությունների պլանավորման, մեթոդների և վերլուծության հիման վրա տարբեր խնդիրներ ձևակերպելու և լուծելու գործընթացի իրականացման համար:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. նկարագրել ֆինանսատնտեսական և կառավարչական հետազոտությունների պլանավորման և վերլուծության ժամանակակից մեթոդները ու մոդելները,
2. ներկայացնել հետազոտությունների պլանավորման և վերլուծության՝ բիզնես-գործընթացներում և մարքեթինգում օգտագործվող մեթոդները և դրանց իրականացման եղանակները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. օգտագործել ֆինանսատնտեսական և կառավարչական հետազոտությունների պլանավորման և վերլուծության ժամանակակից մեթոդները պրակտիկ խնդիրներում,
2. ժամանակակից մեթոդների ընտրությանն նպատակով կատարել մասնագիտական հետազոտությունների համեմատական վերլուծություն և պլանավորում,
3. իրականացնել մասնագիտական հետազոտությունների պլանավորման և վերլուծության մեթոդների տեսակների դասակարգում,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտագործել գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) հայթայթած տեղեկատվությունը,
2. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր,
3. կատարել գիտական հետազոտություններ՝ օգտագործելով տվյալների ինտելեկտուալ վերլուծության վերաբերյալ գիտելիքները:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

- Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)
- Գ2. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները,
- Գ3. արդյունավետորեն պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները
- Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ,
2. նախադեպերի վերլուծություն,
3. խմբային աշխատանք,
4. անհատական աշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Ստուգարքը անցկացվում է հարցատոմսերով՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 10-ական միավոր: Միավորների քայլը 0.5 է: Ստուգումից 20-միավորանոց համակարգում 8 և ավելի միավոր ստացած ուսանողները կհամարվեն ստուգարքը հանձնած:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հետազոտության թեմայի ընտրությունը և արդիականության ձևակերպումը:

Թեմա 2. Հետազոտության գրականության ամփոփումը և հղումների ավելացումը:

Թեմա 3. Գործնական հետազոտությունների իրականացման գործընթացը:

Թեմա 4. Տեսական հետազոտությունների իրականացման մոտեցումները:

Թեմա 5. Գիտական աշխատանքի կառուցվածքը. բաժինների ձևակերպումը, հետազոտված հիմնախնդրի ձևակերպումը, հետազոտության մեթոդաբանության ձևակերպումը, խնդրի լուծման նկարագրությունը և ամփոփումը:

Հիմնական գրականության ցանկ.

1. Баканов М. И., Мельник М. В., Шеремет А. Д. Теория экономического анализа. М.: Финансы и статистика, 2007. 2. Бернстайн Л. А. Анализ финансовой отчетности: теория, практика и интерпретация / пер. с англ. М.: Финансы и статистика, 2003. 3. Ковалев В. В. Управление финансовой структурой фирмы: учебное пособие. М.: Проспект; Велби, 2007. 498 4. Банк В. Р. Финансовый анализ: учеб. пособие / В.Р. Банк, С. В. Банк. — М.: ТК Велби, Изд-во Проспект, 2011, — 344 с. 5. Рузавин Г.И. Методология научного исследования: Учеб.пособие для вузов. М.: ЮНИТ-ДАНА, 1999. 317 с

5. Մասնագիտության արդի հիմնախնդիրները 3 ECTS կրեդիտ

1 ժամ/շաբ. 1 ժամ դաս. Առաջին կիսամյակ . Ստուգարք

Դասընթացի նպատակն է ներկայացնել կառավարման ժամանակակից համակարգի ներդրումը մրցակցային պայմաններում գործող կազմակերպություններում, ուղեկցող ձիսկերը և լուծման ուղիները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնել կազմակերպություններում կառավարման ժամանակակից համակարգի ձևավորման, ներդրման և կատարելագործման մեթոդաբանությունը,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. դրսևորել կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացման և ֆինանսական կայունության ապահովման միջոցառումների գործնական կիրառության կարողություն՝ ձիսկերի վերլուծության և գնահատման հիման վրա:

2. դրսևորել գործընթացային մոտեցման հիման վրա բիզնեսի կառավարման մեթոդների գործնական կիրառության կարողություն,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվել գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),

2. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա1. ներկայացնել ISO 9001:2015 միջազգային ստանդարտներին համապատասխան որակի և ձիսկերի կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման սկզբունքներն ու պահանջները

Ա3. ճանաչել կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպությունների համար

Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)

Գ2. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները

Գ3. արդյունավետորեն պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները

Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ,
2. նախադեպերի վերլուծություն,
3. խմբային աշխատանք,
4. անհատական աշխատանք:

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Դասընթացը ավարտելուց հետո՝ հարց ու պատասխանի և սեփական մեկնաբանությունների ձևավորմամբ:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Ժամանակակից կազմակերպություններում մենեջմենթի առանձնահատկությունները և հիմնախնդիրները:

Թեմա 2. Որակի կառավարման համակարգի հիմնախնդիրները ժամանակակից կազմակերպություններում:

Թեմա 3. Ժամանակակից կազմակերպություններում փոփոխությունների և առաջնորդության հիմնախնդիրները

Թեմա 4. Տարբեր երկրների կազմակերպություններում մենեջմենթների համեմատական վերլուծությունը:

Թեմա 5՝ Ինովացիոն գործունեությունը շուկայական տնտեսությունում:

Թեմա 6՝ Ժամանակակից ինովացիոն գործունեության մեթոդոլոգիական սկզբունքները:

Թեմա 7՝ Ինովացիոն գործընթացների պետական կարգավորումը:

Թեմա 8՝ Մտավոր սեփականության շուկայնացման հիմքերը:

Թեմա 9՝ Պետության դերը և գործառությանը ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում:

Թեմա 10՝ Պետական մարմինների դերակատարումը տնտեսական խնդիրների լուծման համատեքստում:

Թեմա 11՝ Պետական և մունիցիպալ կառավարման նորմատիվ-իրավական բազան:

Թեմա 12՝ Տարածքային զարգացումը որպես տնտեսության զարգացման ուղենիշ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ларионова И.В., Риск-менеджмент: М.: 2014.
2. Θίááέíç, Νðèâáí Ĩ. Μενεδջмент, 8-е изд. - Ĩ.: 2012
3. Ս. Լ. Ղանթարջյան, Մասնագիտության արդի հիմնախնդիրները (Կառավարում), ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2010, էջ 78
4. Ղանթարջյան Ս. Լ., Նորարարությունների կառավարում և մտավոր սեփականության օբյեկտների գնահատում, ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2004, էջ 102
5. Василенко И.А., Государственное и муниципальное управление, М.: 2012
6. Государственное регулирование региональной экономики. Учебное пособие. Э.В. Алехин. Пенза, 2011.

6. Տնտեսագիտություն (2-րդ մակարդակ) 6 ECTS կրեդիտ

2 ժամ/շաբ. 1 ժամ դաս., 1 ժամ սեմ. Առաջին կիսամյակ ԵԳ (2 ընթացիկ քննություն և եզրափակիչ քննություն)

Դասընթացի նպատակն է՝

- առավել ամբողջականացնել և խորացնել ուսանողների գիտելիքները միկրո- և մակրոտնտեսագիտության ասպարեզում,
- զարգացնել տնտեսագիտական հետազոտություններում տնտեսագիտա-մաթեմատիկական մեթոդների և մոդելների կիրառման հմտություններ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնել և հիմնավորել շուկայական տնտեսության տնտեսական հիմնահարցերի ուսումնասիրման համար անհրաժեշտ գիտելիքները
 2. լուսաբանել միկրո- և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները,
 3. ներկայացնել մակրոտնտեսական քաղաքականության ձևերը և հիմնական սկզբունքները,
- բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. կատարել տնտեսագիտական վերլուծություններ ու կանխատեսումներ, օգտագործել դրանց արդյունքները,
2. տնտեսագիտա-մաթեմատիկական մեթոդները կիրառել տնտեսագիտական վերլուծություններում:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվել գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),
2. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները. Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) Գ2. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները Գ3. արդյունավետորեն պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր

Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1-ին ընթացիկ քննություն. Անցկացվում է գրավոր, հարցատոմսով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է: 2-րդ ընթացիկ քննություն. Անցկացվում է բանավոր ներկայացման գնահատման հիման վրա՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 1,0 է: Եզրափակիչ քննություն. Անցկացվում է հարցատոմսով, բանավոր՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1՝ Օգտակարության մաքսիմալացման և ծախսերի մինիմալացման խնդիրները, դրանց կապը: Թեմա 2՝ Անուղղակի օգտակարության ֆունկցիան և ծախսերի ֆունկցիան:

Թեմա 3՝ Վալրասի հավասարակշռությունը, բարեկեցության թեորեմները:

Թեմա 4՝ Փոխարինման և եկամտի էֆեկտները, Սլուցկու հավասարումը:

Թեմա 5՝ Փոխհատուցված և համարժեք վարիացիա, սպառողի ավելցուկը:

Թեմա 6՝ Ծախսերի մինիմալացման խնդիրը, ռեսուրսների պայմանական պահանջարկի ֆունկցիաները, ծախսերի երկրաչափությունը:

Թեմա 7՝ Ծահույթի մաքսիմալացման խնդիրը, թողարկման առաջարկը և ռեսուրսների պահանջարկը:

Թեմա 8՝ Մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները:

Թեմա 9՝ Ամբողջական առաջարկ և ամբողջական պահանջարկ:

Թեմա 10՝ Սպառում, խնայողություններ և ներդրումներ:

Թեմա 11՝ Ընթացիկ հաշիվը և միջազգային առևտուրը:

Թեմա 12՝ Փողի պահանջարկը և առաջարկը:

Թեմա 13՝ Ինֆլյացիա, գործազրկություն, գործարար ցիկլեր:

Թեմա 14՝ Մակրոտնտեսական քաղաքականությունը և թողարկումը փակ տնտեսությունում:

Թեմա 15՝ Մակրոտնտեսական քաղաքականությունը բաց տնտեսությունում՝ ֆիքսված և լողացող փոխանակային կուրսի պայմաններում:

Թեմա 16՝ Երկարաժամկետ տնտեսական աճ:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ն. Մենքյու, Մակրոտնտեսագիտություն, Երևան, «Հայաստան» 1997, 2. Ջ. Սաքս, Ֆ. Լարրեն, Մակրոտնտեսագիտությունը գլոբալ տնտեսությունում, Երևան, «Տնտեսագետ» 2002, 3. Л. Тарасевич, П. Гребенников, А. Леусский, Макроэкономика. Санкт-Петербург, 2003: 4. Д. Хайман, Современная микроэкономика: анализ и применение, Москва, "Финансы и статистика", 1992, 5. В. Binger, E. Hoffman, Microeconomics with Calculus, 1998

7. Մենեջմենթ (II մակարդակ) 6 ECTS կրեդիտ

2 ժամ/շաբ. 1 ժամ դաս., 1 ժամ սեմ. Երկրորդ կիսամյակ ԵԳ (2 ընթացիկ քննություն և եզրափակիչ քննություն)

Դասընթացի նպատակն է՝

- ուսանողներին ծանոթացնել կառավարման մոդելներին և սկզբունքներին,
- նրանց սովորեցնել՝ գնահատելու կազմակերպությունում կիրառվող կառավարման մոտեցումները, առաջադրելու արդյունավետ լուծումներ ռազմավարական և մարտավարական խնդիրների վերաբերյալ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնել կառավարման համակարգային, իրավիճակային և գործընթացային մոտեցումները,
2. թվարկել ժամանակակից կազմակերպությունների կառավարման առանձնահատկությունները,
3. մատնանշել կառավարչական իրավիճակների վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաները,
4. նկարագրել կառավարչական որոշումների ընդունման, կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման, շահադրդման և առաջնորդության արդի մոտեցումները,
5. ձևակերպել թիմային գործընթացների կազմակերպման և կառավարման առանձնահատկությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. կատարել իրավիճակային վերլուծություն,
2. նախագծել ռազմավարական այլընտրանքներ, 3. այլընտրանքային տարբերակներից կատարել ճիշտ ընտրություն,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվել գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, Էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),
2. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր, 3. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

Ա1. ներկայացնել ISO 9001:2015 միջազգային ստանդարտներին համապատասխան որակի և ռիսկերի կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման սկզբունքներն ու պահանջները
Ա3. ներկայացնել պետական և հանրային կառավարման, ինչպես նաև գլոբալ կառավարման հիմնական տեսություններն ու դրաց առանձնահատկությունները:2 Բ6. կիրառել կառավարման հմտություններ և ցուցաբերել միջին և բարձր օղակի կառավարչի ունակություններ: Գ2. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները Գ3. արդյունավետորեն պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Մենեջմենթի ժամանակակից միտումները

Թեմա 2. Համակարգային և իրավիճակային մոտեցումները կառավարման համակարգում

Թեմա 3. Մենեջմենթի սոցիալական և հոգեբանական առումները

Թեմա 4. Մենեջմենթի միջազգային միջավայրը

Թեմա 5. Կազմակերպության ներքին և արտաքին միջավայրերի գործոնային վերլուծություն

Թեմա 6. Կազմակերպության արդյունավետ կառավարման հիմնախնդիրները:

Թեմա 7. Կազմակերպությունների կառավարման առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում

Թեմա 8. Կազմակերպական փոփոխություններ և զարգացում

Թեմա 9. Կառավարման մոտեցումների, մեթոդների, ադապտիվ լուծումների և համակարգային մտածողության մտածողության վերաբերյալ դիտարկումներ կազմակերպությունների օրինակով:

Հիմնական գրականության ցանկ.

1. Дафт Р. Л., Менеджмент, 10-ое изд., Питер , 2015 2. Мескон М., Альберт М., Хедоури Ф., Основы менеджмента, М., 2015 3. Трайнев В.А., Дмитриев С.А., Пинчук И.И., Менеджмент и маркетинг в образовании, науке , производстве и его информационное обеспечение, М., Изд-во: Дашков и К, 2008 4. Druker P. Management: Tasks, Responsibilities, Practicess, New York, 2015 5. Market-driven management. Strategic and operational marketing, Jean-Jacques Lambin, www.palgrave.com/business/lambin

8. Կազմակերպությունների գործունեության կոնտրոլինգ 3 ECTS կրեդիտ

1 ժամ/շաբ. 1 ժամ դաս. Երկրորդ կիսամյակ ԱԸԳ (միայն եզրափակիչ քննություն)

Ծրագրի նպատակն է՝

- ուսանողներին փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ ճկուն, հավաստի և օպերատիվ տնտեսական տեղեկատվական համակարգի ստեղծման, պլանավորման, վերահսկման և կառավարչական որոշումների ընդունման ժամանակ դրա ընձեռած հնարավորություններից օգտվելու համար, ուսանողներին սովորեցնել՝
- ինքնարժեքի հաշվարկում, շահույթի կառավարում և ռիսկերի գնահատում,
- գործունեության արդյունավետության բարձացման ռեզերվների հայտնաբերման մեթոդների տիրապետումը,
- արտադրանքի ինքնարժեքի հաշվառման մեթոդների տիրապետումը: Որոշումների համեմատական արդյունավետության վերլուծությունը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. չափել կառավարչական ծախսերն ու ինքնարժեքը,
2. նկարագրել գործունեության արդյունավետության պաշարները,
3. ներկայացնել արտադրական հաշվառման համակարգերը, «standart-cost» «direct-cost» «activity-based cost»,
4. քննարկել գործունեության պլանավորման և բյուջետավորման սկզբունքները,
5. ներկայացնել ռազմավարական, մարտավարական և օպերատիվ որոշումների ընդունման մեթոդները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գործնականում կիրառել ռազմավարական, մարտավարական և օպերատիվ որոշումների ընդունման մեթոդները,
2. հիմնավորել կառավարչական հաշվառման տվյալների հիմնա վրա կայացված կառավարչական որոշումները,
3. գնահատել տարբեր ռեսուրսների օգտագործման և ողջ գործունեության արդյունավետությունը,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվել գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, Էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),
2. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա3. ճանաչել կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպություններում,

Ա6. ճանաչել աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորման մոտեցումները, կառավարչական հաշվառման և բյուջետավորման համակարգերի կառավարման մեթոդները Բ2. նախագծել կազմակերպության արդյունավետ կառավարման համար բյուջեների ձևավորման և կառավարչական հաշվառման համար տվյալների բազա, մասնակցել լոգիստիկական ցանցի ձևավորման աշխատանքներին Գ2. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները Գ3. արդյունավետորեն պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ,
2. խնդիրներ,
3. նախադեպերի վերլուծություն,
4. անհատական աշխատանք:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1՝ Կառավարչական հաշվառումը կազմակերպության կառավարման համակարգում:

Թեմա 2՝ Ծախսերի դասակարգում: Ինքնարժեքի հաշվառման համակարգեր:

Թեմա 3՝ Ինքնարժեքի հաշվառման համակարգեր:

Թեմա 4՝ Տեղեկատվության վերլուծություն որոշումների կայացման համար:

Թեմա 5՝ Կառավարչական հաշվետվողականություն

Թեմա 6՝ Կառավարչական վերահսկողության համակարգեր:

Թեմա 7՝ Բյուջետավորում որպես պլանավորման, կառավարման և վերահսկողության գործիք:

Թեմա 8՝ Ծախսերի կառավարում:

Թեմա 9՝ Ռազմավարական և մարտավարական կոնտրոլինգ

Թեմա 10՝ կոնտրոլինգի համակարգի մշակում և ներդրում:

Թեմա 11՝ Արդյունավետության կառավարում:

Թեմա 12՝ Կոնտրոլինգի առանձնահատկությունները տարբեր ոլորտներում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Концепция контроллинга. Управленческий учет. Система отчетности. Бюджетирование / Horvath & Partners ; пер. с нем. [В. Толкача, С. Данишевич, М. Гавриша ; науч. ред. В. Толкач]. - 4-е изд. - М. : Альпина Паблишерз, 2009. - 269 с. 2. Друри К. Управленческий учет для бизнес-решений: Учебник-М Юнити-Дана, 2012 - 655 с 3. Голов С.Ф. - Управленческий учет: К, Либра.2009 - 576 с 4. Управленческий учет: уч. пособие под ред. проф. Соколова Я.В М, Магистр, 2010 - 428 с

9. Կազմակերպական վարք 3 ECTS կրեդիտ

1 ժամ/շաբ. 1 ժամ դաս. Երկրորդ կիսամյակ . ԱԸԳ (միայն եզրափակիչ քննություն)

Դասընթացի նպատակն է կազմակերպական միջավայրում աշխատողների վարքագծի բացատրության, կանխատեսման և վերահսկման իրականացումը:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. քննարկել կազմակերպական միջավայրում աշխատողների վարքագծի բոլոր տեսանկյունները՝ օգտագործելով գիտական մեթոդներ և կիրառել համակարգային ուսումնասիրություն՝ պատճառահետևանքային կապերի սահմանման միջոցով,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. օգտագործել կազմակերպության գործունեության արդյունավետության և կազմակերպական միջավայրում կատարվող աշխատանքների որակի բարձրացման մեխանիզմները,

2. մեկնաբանել աշխատողների մոտ աշխատանքից բավարարվածության զգացումի բարձրացման, կազմակերպական հաղորդակցության որակի լավացման և աշխատանքի հետ կապված սթրեսի մեղմման մեթոդները,

գ. քնդհանրական/փոխանցելի կարողություններ

1. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները,

2. պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները,
3. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա5. Նկարագրել մարքեթինգային հետազոտությունների, անձնակազմի խթանման և գնահատման մեթոդներին, առաջնորդության և կորպորատիվ կառավարման մեթոդաբանությանը Ա7. սահմանել կառավարչական հիմնախնդիրների լուծմանն առնչվող հոգեբանական դրույթների և կազմակերպական վարքի էթիկայի նորմերը Բ6. կազմակերպել աշխատանքը բարձր արդյունավետություն ապահովելու համար՝ և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար Գ2. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները Գ3. արդյունավետորեն պլանավորել ժամանակն ու այլ ռեսուրսները:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

- Թեմա 1. Կազմակերպական վարք առարկան:
- Թեմա 2. Անհատական վարքագիծ:
- Թեմա 3. Անձի տեսակները և էմոցիաները:
- Թեմա 4. Մոտիվացման ժամանակակից մոտեցումները:
- Թեմա 5. Որոշումների անհատական ընդունում:
- Թեմա 6. Խմբային վարքագիծ:
- Թեմա 7. Աշխատանքային թիմեր:
- Թեմա 8. Հաղորդակցություն:
- Թեմա 9. Առաջնորդություն և վստահություն:
- Թեմա10. Իշխանություն և քաղաքականություն:
- Թեմա11. Կոնֆլիկտներ և բանակցություններ:
- Թեմա12. Կազմակերպական կառուցվածքներ:
- Թեմա13. Կազմակերպական մշակույթ:
- Թեմա14. Անձնակազմի կառավարման քաղաքականություն:
- Թեմա15. Կազմակերպական փոփոխություններ և կազմակերպական զարգացում:

Հիմնական գրականության ցանկ.

1. Ճիճաճից, Նձեճճի Ի. Իճիճի իճաճիցձձձիճիճի յճաճաճիճ ի.: 2006.-448Ն 2. Äæððàèä Äðèíáððä İðääíèçàðèíííä İðääááèä. İð òáíðèè è ìðàèðèèä-İ.:2004.-912Ն 3. Äàðð Ð.Ë Óðíèè èèääðñðää-İ.:2006.-480Ն. 4. Пивоваров С.Сравнительный менеджмент 2-е изд.-СПБ.:Питер:2008.-480Ն 5. Ճիճաճից, Նձեճճի Ի. Менеджмент, 8-е изд. - İ.: 2007.

10. Ռազմավարական կառավարում 3 ECTS կրեդիտ

1 ժամ/շաբ. 1 ժամ դաս. Երկրորդ կիսամյակ ԱԸԳ (միայն եզրափակիչ քննութ ուն)

Դասընթացի նպատակն է՝

- յուրացնել ռազմավարության մշակման և մրցունակության վերլուծության հիմնական դրույթները և սկզբունքները,
- յուրացնել կազմակերպության ռազմավարության վերլուծության համար գոյություն ունեցող մի շարք մոտեցումներ և գործիքներ,
- զարգացնել հաշապահական հաշվառման, ֆինանսական վերլուծությունների, մարքեթինգի, մենեջմենթի, ինովացիոն մենեջմենթի, լոգիստիկայի ֆունկցիոնալ ուղղություններից տեսություններ, սկզբունքներ, ինտեգրված գաղափարների ստեղծելու ունակությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնել կազմակերպության գործունեության ինդուստրիան, արտաքին միջավայրը, կատարել մրցակցային վերլուծություն՝ կիրառելով համապատասխան մեթոդներն ու գործիքները,

2. քննարկել կազմակերպության ներքին միջավայրը ըստ ֆունկցիոնալ ուղղությունների, բացահայտելու ներքին ուժեղ և թույլ կողմերը՝ կիրառելով համապատասխան մեթոդներն ու գործիքները,

3. նկարագրել կազմակերպության ռազմավարությունը, բացահայտելու ռազմավարական նոր ուղիներ,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. բացահայտել կազմակերպության երկարաժամեռ ռազմավարական նպատակները՝ SWOT, SPACE, GRAND MATRIX գործիքների միջոցով,

2. կատարել ֆինանսական հաշվետվությունների վերլուծություններ, գնահատել իրականացվող ռազմավարության արդյունավետությունը,

3. կատարել ֆինանսական կանխատեսումներ՝ հիմնվելով առաջադրվող ռազմավարական նոր ուղիների վրա,

4. տարանջատել ռազմավարական նպատակների իրագործման ուղիները, որոնց հիման վրա կկազմի տարեկան գործողությունների ծրագրեր՝ բարելավելով կազմակերպական կառուցվածքը, զարգացնելով կազմակերպության ներքին պրոցեսներն ու ընթացակարգերը,

5. նախագծել ամբողջական ռազմավարական կառավարման փաստաթուղթ,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. զարգացնել թիմային աշխատանքի իրականացման հմտությունները,

2. զարգացնել ստեղծագործական, քննադատական, վերլուծական մտածողությունը:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա2. քննարկել կազմակերպության նյութական, տեղեկատվական և այլ հարակից հոսքերի, ռազմավարական և ֆինանսական կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաները Ա4. դասակարգել կազմակերպություններում ինովացիայի և մարքեթինգի կառավարման, գործարար գործընթացների ռեինժինիրինգի ժամանակակից տեխնոլոգիաները Բ2. նախագծել կազմակերպության արդյունավետ կառավարման համար բյուջեների ձևավորման և կառավարչական հաշվառման համար տվյալների բազա, մասնակցել լոգիստիկական ցանցի ձևավորման աշխատանքներին Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) Գ2. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները

Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Այցելություններ նախապես ընտրված կազմակերպություններ՝ տեղում ծանոթանալու կազմակերպության գործունեությանը, ներքին միջավայրին, ռազմավարական նպատակներին, ներքին պրոցեսներին և պրոցեդուրաներին, փաստաթղթերին:

2. Թիմային աշխատանքների շրջանակներում ուսանողները կմշակեն այցելած կազմակերպություններից մեկի ռազմավարական նոր ծրագիրը:

3. Այցելություններ կազմակերպությունների այլ շահակից կառույցներ՝ ֆինանսական, որակի սերտիֆիկացման, պետական և այլն:

4. Հրավիրյալ դասախոսներ՝ ֆինանսական, պետական կամ այլ շահակից կառույցներից:

5. Թիմային ներկայացումներ: 12.

Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Դասընթացն առանց ընթացիկ գնահատման է: Նախատեսված եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 7 և 6 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.5 է:

Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

1. Ռազմավարական կառավարման գործընթացը:

1.1 Ռազմավարական կառավարման էությունը:

1.2 Ռազմավարական կառավարման փուլերը:

1.3 Արդյունավետ ռազմավարական կառավարման մոդելը: Դեպքի ուսումնասիրություն:

2. Կազմակերպության արտաքին միջավայր:
 - 2.1 Կազմակերպության անուղղակի ազդեցության ոլորտները:
 - 2.2 Կազմակերպության ուղղակի ազդեցության ոլորտները:
 - 2.3 Արտաքին գործոնային գնահատում:
 - 2.4 Ինդուստրիայի վերլուծությունը: Մ. Պորտերի մրցակցության տեսությունը: Դեպքի ուսումնասիրություն:
3. Կազմակերպության ներքին միջավայր:
 - 3.1 Կազմակերպության ներքին միջավայրի տարրերը և դրանց փոխհարաբերությունները:
 - 3.2 Կազմակերպության արժեքային ձևավորում:
 - 3.3 Ներքին գործոնային գնահատում: Դեպքի ուսումնասիրություն:
4. Կազմակերպության ֆինանսական մոդելավորում:
 - 4.1 Կազմակերպության գործունեության ֆինանսական վերլուծությունը:
 - 4.2 Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների ձևավորումը և վերլուծությունը:
 - 4.3 Կազմակերպության ֆինանսական պլանավորման և կանխատեսման մոդելներ:
 - 4.4 Կազմակերպության գործունեության վերլուծությունը ֆինանսական ցուցանիշների միջոցով: Դեպքի ուսումնասիրություն:
5. Կազմակերպության ռազմավարությունները, դրանց տեսակները:
 - 5.1 Ինտեգրման ռազմավարությունները. ուղղահայաց և հորիզոնական ինտեգրումներ: Դեպքի ուսումնասիրություն:
 - 5.2 Ինտենսիվ ռազմավարությունները. շուկայի զարգացման, շուկայի ընդլայնման և առաջմղման ռազմավարությունները: Դեպքի ուսումնասիրություն:
 - 5.3 Դիվերսիֆիկացման ռազմավարությունները. փոխկապակցված և ոչ փոխկապակցված դիվերսիֆիկացիաներ: Դեպքի ուսումնասիրություն:
 - 5.4 Պաշտպանական ռազմավարությունները. լիկվիդացման, ակտիվների իրացման ռազմավարություններ: Դեպքի ուսումնասիրություն:
 - 5.5 Մ. Պորտերի ջնեռիկ ռազմավարությունները: Դեպքի ուսումնասիրություն:
 - 5.6 Նորարարական ռազմավարություններ: Դեպքի ուսումնասիրություն:
6. Կազմակերպության ռազմավարության մշակումը և ընտրությունը:
